

20/06/2025թ.
Ժամը 10⁰⁰

Հարկադիր կատարումն ապահովող

ք. Երևան Հալաբյան 41ա

թիվ՝ 2 Արձանագրություն
ՀԿԱԾ-ԳՀԾԶԲ-25/45 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝
Նախագահ՝ Գ. Մկրտչյան

անդամներ՝ Ա. Մաթևոսյան
Հ. Պետրոսյան
Ն. Ղուկաս
Լ. Խուդինյան

քարտուղար՝ Ա. Խաչատրյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված
«Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի
համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավագործ և հայտարարվում է բացված

Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նիստի նախագահ՝ Գ. Մկրտչյան

1. Ընդունելի գիտություն որ՝

1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 30/05/2025թ-ին հրապարակվել է www.armeps.am համակարգում և տեղեկագրում:

2. Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ Հարկային կոդ 00125657, Հասցե ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 23/5, էլեկտրոնային փոստ info@zett.am, Հեռախոսահամար +37491005537, +37477718610:

«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ Հարկային կոդ 02708407, Հասցե ք. Երևան, Մաշտոցի 45ա, էլեկտրոնային փոստ info@studio-one.am, Հեռախոսահամար +37460522378, +37491522378:

3. Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության և մերժված հայտերի մասին

3.1 Մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

3.2 «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ և «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ:

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված հայտին կից փաստաթղթերում առկա է եղել թվով մեկ թերի ներկայացված փաստաթուղթ, որը պատվիրատուի կողմից տրված սահմանված ժամկետում չտրվել է և հայտը գնահատվել է դրական:

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ ընկերության մասնագիտական փորձառության և աշխատանքային ռեսուրսների միավորը ըստ բանաձևի կազմում է 64 (ներկայացվել է պետական կառավարման

համակարգի մարմինում նախկինում կատարած թվով երեք պայմանագրի պատճենները ընդհանուր՝ 96.000.000 ՀՀ դրամ հանրագումարով և ներկայացվել է թվով երեք մասնագետներ, որոնք համապատասխանում են սույն գնման հրավերի 2.7-րդ կետի 4-րդ ենթակետով նշված մասնագետների որակավորման ներկայացվող այլ պահանջներին), իսկ գնային առաջարկի միավորը ըստ բանաձևի կազմում է 20, ընդհանուր գնահատվում է 84 միավոր:

4. «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊ ընկերության(այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված հայտին կից փաստաթղթերում առկա են եղել թվով 6 անհամապատասխանություն:

Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում Ընկերության կողմից վերացվել են 16.06.2025թ. կազմված արձանագրության մեջ նշված թվով 5 անհամապատասխանությունները, կատարվել են շտկումներ: Սակայն, Ընկերության կողմից չեն ներկայացվել հայտին կից ի սկզբանե ներկայացված **02.05.2023թ-ին կնքված թիվ N 02/05/23, 19.04.2022թ-ին կնքված N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-22/1, 05.03.2025թ-ին կնքված N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-25/1** պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները, ուստի հնարավոր չէ գնահատել պայմանագրերի պատշաճ կատարումը, **չնայած որ գնման հրավերի 1-ին բաժնի 2-րդ գլխի 2.7 կետի բ) ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պարշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:**

Այսպիսով, Ընկերությունը Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը **գնահատվում է 0**, քանի որ վերջինս չի ներկայացրել վերը նշված կետի ա) ենթակետով նախատեսված հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած պետական Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններում ներդրված բազմաշահառու էլեկտրոնային համակարգերի ներդրման և դրանց բխող ծրագրի սպասարկման ծառայությունների մատուցման առնվազն երկու պայմանագիր, որի շրջանակում մատուցված ծառայության ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ առնվազն մեկ պայմանագրով, պակաս չէ սույն հրավերով նախատեսված գնման գնից: **Մասնավորապես՝** գնման հայտը ներկայացվելիս ներկայացվել է թվով 5 պայմանագիր, որից 2-ը կնքված են 2018 (Պատվիրատու՝ Կարմիր խաչ) և 2019թ.(Պատվիրատու՝ ԱԳՆ) ուստի դրանք չենք կարող դիտարկվել և քննարկվել, մյուս թվով երեք՝ 02.05.2023թ-ին կնքված թիվ N 02/05/23, 19.04.2022թ-ին կնքված N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-22/1, 05.03.2025թ-ին կնքված N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-25/1 պայմանագրերի մասով չեն ներկայացվել որևէ ապացույց հանձնման-ընդունման արձանագրության մասին, ինչպես նշվել է վերը, չնայած որ Պատվիրատուն սահմանված կարգով Ընկերությանը տրվել է շտկման հնարավորություն (շտկումից հետո ներկայացված արձանագրությունները չեն վերաբերվում հայտի ներկայացման պահին համակարգ ներբեռնած պայմանագրերին): Բացի այդ, ներկայացված պայմանագրերը մեծամասամբ պետական մարմինների **կայքերի ստեղծման և սպասարկման պայմանագրեր են**, որոնք որևէ կերպ չեն կարող համարվել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններում ներդրված բազմաշահառու էլեկտրոնային համակարգերի ներդրման և **դրանց բխող ծրագրի սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր:**

Ավելին, շտկումից հետո Ընկերությունը ներկայացրել է **լրացուցիչ պայմանագրեր՝ թվով երեք պայմանագրեր**, որոնք ևս չեն կարող քննարկվել, քանի որ գնման հայտը ներկայացնելիս սահմանված

ժամկետում ի սկզբանե դրանք չեն ներբեռնվել, բացի այդ պայմանագրերից *երկուսի պատվիրատուն չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմին* (*Պատվիրատուները եղել են՝ «ՈՒԱՆ ԼԱԲՍ» ՍՊԸ, ՀՀ Կենտրոնական բանկ*):

Բացի այդ, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները, ըստ այդմ Քննչական կոմիտեն չի կարող համարվել պետական կառավարման համակարգի մարմին, ըստ այդ վերջինիս հետ կնքված պայմանագիրը այդ նկատառումից ելնելով ևս չի կարող համարվել վերաբերելի պայմանագիր:

Ընկերությունը ներկայացրել է նաև «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի միջև 03.04.2023թ-ին կնքված **թիվ 0030423 պայմանագիրը**, որին կցված տեխնիկական բնութագրից պարզվել է, որ Ընկերությունը **այլ ընկերությանը** պատվիրել է իրականացնել ՆԳՆ անձնագրային վիզաների վարչության ստորաբաժանումներում նույնականացման քարտերի բազմաշահառու էլեկտրոնային համակարգի և կենսաչափական տվյալների հիման վրա տրամադրվող նույնականացման քարտերի հայտերի ընդունման կայանների ՆԵՐԴՐՄԱՆ և սպասարկման աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ պայմանագիրը ներկայացվել է առանց ստորագրության և կնիքի, բացի այդ, անհրաժեշտ էր ներկայացնել տեղեկատվություն կամ հավաստում վերոնշյալ պայմանագրի (տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքի) արդյունքը պետական մարմնում իրականացված լինելու և տվյալ տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքը համապատասխան պետական մարմնի կողմից ընդունված լինելու վերաբերյալ՝ Հանձնաժողովը խնդրել է շտկել անհամապատասխանությունները: Ընկերությունը սահմանված ժամկետում շտկելով անհամապատասխանությունները՝ ներկայացրել է ՀՀ ՆԳՆ-ի հետ կնքված 31.03.2023թ. թիվ ԳՀՁԲ-ԾԱԱ-ԱՎՎ/2023-Լ-35 պայմանագիրը, որպես հիմք վերջինիս և «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի միջև 03.04.2023թ-ին կնքված թիվ 0030423 պայմանագրի:

Նշված պայմանագրի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզվել է, որ պետական մարմնի հետ կնքված պայմանագիրը վերաբերում է **բացառապես** Անձնագրային վիզաների վարչության ստորաբաժանումներում գործող նույնականացման քարտերի համակարգի և կենսաչափական տվյալների հիման վրա տրամադրվող նույնականացման քարտերի ընդունման կայանների սպասարկման աշխատանքներին:

Այսպիսով, ՀՀ պետական կառավարման համակարգի մարմնի (ՆԳՆ) կողմից պահանջված և ընդունված աշխատանքները (չնայած ի սկզբանե ներկայացված մասնավոր ընկերությունների միջև կնքված պայմանագրի) սպասարկման բնույթի է և կրկին չի կարող համարվել պետական մարմիններում բազմաշահառու էլեկտրոնային համակարգերի ներդրման և դրանց բխող ծրագրի սպասարկման **ծառայությունների մատուցման աշխատանքներ**:

Ամբողջ վերոգրյալի լույսի ներքո Հանձնաժողովը մասնակից «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊ ընկերության «Մասնագիտական փորձառության» որակավորումը **չի համարում բավարար** և ըստ այդմ գնահատում է 0, քանի որ վերջինս չի ներկայացրել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող **երեք տարիների ընթացքում** պատշաճ ձևով իրականացրած **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններում** ներդրված բազմաշահառու էլեկտրոնային համակարգերի ներդրման և դրանց բխող ծրագրի սպասարկման ծառայությունների մատուցման առնվազն **երկու պայմանագիր**, որի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ առնվազն մեկ պայմանագրով, պակաս չէ սույն հրավերով նախատեսված գնման գնից (40.000.000 ՀՀ դրամ):

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից ներկայացված գնման հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներին, հարկ է նշել, հիմք ընդունելով Պատվիրատուի կողմից հրավերին կցված

և անհրաժեշտ տեխնիկական բնութագիրը՝ «աշխատանքային ռեսուրսներ» բաժնում մասնագետներին ներկայացվել են որոշակի պահանջներ:

Այդուհանդերձ, չնայած որ Ընկերության կողմից ներկայացվել է թվով 4 մասնագետ չհաշված ծրագրի ղեկավարը և ներկայացվել են ինքնակենսագրականները, որոնք վկայում են որ վերջիններս ունեն առնվազն 5 տարվա տեղեկատվական համակարգերի ոլորտում փորձ, այդուհանդերձ, մասնագետի մասով, չի ներկայացվել ապացույց առ այն, որ մասնագետները համապատասխանում են գնման հրավերի մեջ 2.7-րդ կետի 4-րդ ենթակետով նշված մասնագետների որակավորման ներկայացվող այլ պահանջներին (օրինակ՝ վերջին 5 տարվա ընթացքում մասնակցություն պետական կառավարման համակարգի մարմիններում, ՀՀ դատարաններում, առևտրային բանկերում, վճարահաշվարկային կազմակերպություններում բարդ՝ բազմաշահառու և բազմաբաղադրիչ ու ժամանակակից էլեկտրոնային համակարգի նախագծմանը, որոնք իրենցից ենթադրում են նաև արգելանքի կիրառում, վերացում, անձանց նույնականացում, անձանց գույքի և դրամական միջոցների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացում, տվյալ մարմնում առկա էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն):

Ըստ այդմ, հաշվի առնելով որ, Ընկերության «աշխատանքային ռեսուրսներ» չեն համապատասխանում գնման հրավերի 2.7-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջներին՝ Հանձնաժողովը Ընկերության «աշխատանքային ռեսուրսներ»-ը ևս գնահատում է 0:

Այսպիսով, ըստ Գնման հրավերի մեջ նշված բանաձևի՝ «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊ ընկերության գնային առաջարկի միավորը կազմում է 20.8, իսկ Մասնագիտական փորձառության և/կամ աշխատանքային ռեսուրսների մասով 0, ուստի հիմք ընդունելով Գնման հրավերի 1-ին բաժնի 1-ին գլխի 2.4-րդ կետը, *համաձայն որի՝ «Մասնագիտական փորձառության և/կամ աշխատանքային ռեսուրսների մասով առաջարկ չներկայացվելու կամ առաջարկը 0 գնահատվելու դեպքում՝ մասնակցի հայտը մերժվում է»* Հանձնաժողովը որոշում է Ընկերության հայտը մերժել:

5. Այսպիսով, ՀԿԱԾ-ԳՀԾԶԲ-25/45 գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ, որին կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունել որոշում **կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)** ձայներով.

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների մասին՝

5.1 հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

6. Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին՝

6.1 Բողոքներ չեն եղել:

7. Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝

7.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

8. Անգործության ժամկետ սահմանելու մասին

8.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝

Ընդունել որոշում **կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)** ձայներով .

Նախագահ՝ Գ. Մկրտչյան

անդամներ՝ Ա. Մաթևոսյան

Հ. Պետրոսյան

Ն. Ղուկաս

Լ. Խուրդինյան

քարտուղար՝ Ա. Խաչատրյան



Five blue ink signatures are written on horizontal lines. The signatures are stylized and cursive. The first signature is the largest and most prominent, followed by four smaller ones below it.